## ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա

**Ս. Էջմիածին**

Վեհափառ Տեր,

Շնորհավորում ենք Ձեր ծննդյան տոնը և ցանկանում Ձեզ առողջություն, երկար տարիների խաղաղ կյանք և բեղմնավոր աշխատանք: Ձեր հոգու մեծությամբ, վեհանձն ու հայրական հոգատարությամբ, պայծառ մտքով, ողջախոհ բանականությամբ վայելում եք ողջ հայ ժողովրդի սերն ու հարգանքը: Ցանկանում ենք, որ կրկնապատկվի Ձեր կյանքի կորովը, հոգու արիությունը և սրտի բերկրանքը:

Շնորհավորելով Ձեր ծննդյան տոնը, ցանկանում ենք շնորհակալության խոսք հղել երախտապարտ հայ ժողովրդի անունից Ձեր կատարած ամենօրյա հայրենանվեր աշխատանքի համար: Կրկին շնորհավորում ենք և ցանկանում Ձերդ Սրբությանը քաջառողջություն՝ ի փառս հայ ժողովրդի:

**ՎԱԶԳԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ**
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Երևան,
20 սեպտեմբերի 1990 թ.